# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 հոկտեմբերի 2017 թվականի N 102-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակա-յության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման հավելված 57-ում «Դոլունց Նաիրա» բառերը փոխարինել «Անդրիյան Հարություն»բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կից՝ ՀՀ Սյունիքի մարզի «Խոզնավարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի գրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 6
ք. Կապան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
«ԽՈԶՆԱՎԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Սյունիքի մարզ գ. Խոզնավար, հեռ. +374 77 037 363, էլ. -հասցե՝ khoznavar@schools.am

«02» «10» 2017թ.

ՀՀ Սյունիքի մարզպետ

պարոն Վահե Հակոբյանին

ՀՀ Սյունիքի մարզի «Խոզնավարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի նախագահ՝ Արմինե Ագաբեկյանից

## ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն մարզպետ.

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Սյունիքի մարզի «Խոզնավարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Կոլեգիալ կառավարման մարմնի կազմում տեղի է ունեցել մանկավարժական խորհրդի կողմից ներկայացված անդամի փոփոխություն: Խորհրդի նախկին անդամ Նաիրա Մարատի Ղոլունցը իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից և տեղափոխվել Գորիսի թիվ 6 հիմնական դպրոց «Խոզնավարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի նիստում կառավարման խորհրդի նոր անդամ է ընտրվել Հարություն Սեյրանի Անդրիյանը: Խնդրում եմ Ձեզ, հաստատել այդ փոփոխությունը:

Նիստի արձանագրության քաղվածքը կցված է:

Խորհրդի նախագահ՝ /Ա. Աղաբեկյան/

Քարտուղար՝ /Ն. Պողոսյան/

ԲԱԺԻՆ
N 9577
«13» 10 2017թ.

# ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Սյունիքի մարզի «Խոզնավարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թիվ 9 մանկավարժական խորհրդի նիստի արձանագրությունից:

2017թ նոյեմբերի 3-ին «Խոզնավարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում կայացավ մանկավարժական խորհրդի թիվ 9-րդ նիստը, որի օրակարգի առաջին հարցը վերաբերվում էր «Խոզնավարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Կոլեգիալ կառավարման խորհրդի անդամի ընտրությանը:

Առաջադրված մեկ թեկնածուից փակ գաղտնի քվեարկությամբ միաձայն մանկավարժական խորհրդի կողմից, «Խոզնավարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Կոլեգիալ կառավարման խորհրդի անդամ ընտրվեց Հարություն Մեյրանի Անդրիյանը:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ /Վ.Զախարյան/

Քարտուղար՝ /Հ.Գևորգյան/